

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

«ՄՇԱԿ» ԿՐԹԳԻՐԸ

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժենայ ՎԵՑ ռուբլի:

Դիմել Թիֆլիս, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
յուլիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղօրօք յայանելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցան-
կացողները վճարում են Մէկ ռուբլի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԻՆԻՍՏԻԿ

Անձրեանքի շրջանը պատերազմական բե-
մով. Ներքին ՏԵՍԻՍԻՍՏԻԿ. Մի քանի խօսք
եկատրիքներին հայ գաղութի մասին. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍԻՍԻՍՏԻԿ. Պատերազմի շուրջը. Նա-
մակ Պարսկաստանից. ՆԵՐԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱԳՐԱԿԱՆ. Քաղա-
քացիական կանանց միջազգային կոնգրէսը:

ԱՆՁՐԵԱՆՔԻ ՇՐՋԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄՈՒՄ

Վերջին հեռագիրները հաղորդեցին, թէ
հարաւային Մանջուրիայում սկսվեց ան-
ընդհատ անձրեանքի շրջանը, որ տևում է
առնասարակ մի ամիս, կամ փոքր ինչ
աւելի: Այդ ամսվայ ընթացքում հաղոր-
դակցութիւնը երկրի զանազան մասերի
մէջ շատ աստիկ սահմանափակվում է,
կամ նոյն իսկ զրոյրովին ընդհատվում:
Նապօսական գործի համար շատ կը
դժուարանայ արշաւանքներ կատարելը, ո-
րովհետև անկաշիկ կը լինի թէ ուտեստ
և ռազմամթերք բերելը գէպի զօրաքանակ-
ները և թէ ծանր թնդանօթներով փոխա-
դրել:

Մենք մի անգամ հաղորդել էինք տե-
ղեկութիւններ անձրեային շրջանի մա-

սին, որի ժամանակ առաջանում է ընա-
կարաններում սարսափելի խռնակութիւն,
մինչդեռ օդը շատ քիչ է զովանում: Նոյն
իսկ անձրեանքի ժամանակ, „B. E.“-ի ա-
ստիկ, ջերմութեան աստիճանը չէ իջ-
նում և մարդ իրան զգում է բոլոր ժամա-
նակ բաղնիքում: Գիշերները շունչ առնելը
դժուարանում է, տաքութիւնը անստանե-
լի է լինում: Խոնավութեան պատճառով
զարգանում են ամեն տեսակ միջատներ
և կեղտոտութիւններ: Ամեն տեսակ թի-
թեռներ թռչկոտում են մեծ քանակու-
թեամբ և թռնակոտում մարդու կենքը:
մանաւանդ կերակրի ժամանակ: Շատ են
նոյնպէս կարիճները: Անձրեանքի պա-
ղար առնելու թափվում է մի քանի օր
շարունակ, հեղեղելով բոլոր տարիարակ
տեղերը և վարարելով գետերը:

Անձրեային շրջանը նախօրօք հաշուի է
առնված երկու պատերազմող կողմերիցն
էլ, և նա նոյն իսկ աւելի վաղ էր սպաս-
վում: Պատերազմող կողմերը վերջին ժա-
նապահները աւելի փութկոտութիւն և
եռանդ էին ցոյց տալիս մասամբ հէնց
այն նկատումով, որ կարողանան որոշ
հետևանքների հասնել մինչև անձրեանքի
շրջանի կատարեալ տեղափոխութիւնը,
երբ ստիպված պէտք է լինէր իրանց
մասնէն երկարատեւ անդործութեան: Այդ
պատճառով սպասվում են այս օրերս մի
շարք եղելութիւններ պատերազմական
բեմի զանազան մասերում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՍՏԻԿ

Մի ԳԱՆԻ ԽՈՍՔ ԵՎ ՍԵՐԻՆՆՈՒՄԻ ԷԱՅ ԳԱ-
ԴՈՒԹԻ ՄԱՍԻՆ

Եկատրիքները 25—30 տարի առաջ հա-
մես պիւրաբար էր նման. ընդհանրա-
պէս կենսական տարբերակներ պահանջները լրա-
ցնելով միանգամայն գոհ էին մնում ճակա-
տագրից. ուսումը, վաճառականութիւնը, հա-
սարակական կենսանքը և անտեսական մրցումը
սպովորից զեռ ևս դուրս չէին եկել: Բայց ժա-
մանակի խթանները այդ գիւրաբար էլ
տուեցին հարուածներ ու ցցեցին կուլտուրա-

2. Կինը պէտք է դպրոցում իսկ իւրացնէ
այն մտաւոր գէները, որոնք գոյութեան նե-
ցուկ պիտի ծառայեն նրա համար կենսանքի մէջ
գործունէութեան շրջանում: Եւ այդ պատճա-
ռով կարեւոր է տալ նրան հնարաւորութիւն
ամեն մի կոչման համար համապատասխան
նախապատրաստութիւն ձեռք բերելու: Այդ
հնարաւորութիւնը կայանում է նրանում, որ
կնոջ առաջ ևս պիտի բացվեն անխոր ընդ
մասնագիտական դպրոցների դռները:

3. Կնոջ ընտելութիւնը շնորհիվ առաջին ու
սուրբ կոչումը մայրութիւնը, միայն այն ժա-
մանակ կը լինի կանգնած իր բարձրութեան
վրա, արգասաւորութիւն հետեւողից, եթէ նա
ևս ազատիկ նահապետական ըմբռնման
շրջանակից և, համապատասխան արդի կուլ-
տուրական պահանջներին, հրահանգել, ման-
կավարժական-դաստիարակական կրթութիւն
ստանայ:

4. Անհրաժեշտ է զրա հետ միասին մատա-
կարարել կնոջ տնային անտեսութեան նախա-
պատրաստական կրթութիւն:

5. Կինը ոչ միայն մայր ու անտեսուհի է,
այլ և այդ աւանդական հասկացողութիւնների
վրա աւելացել է ներկայ կենսանքը և քաղա-
քացուհի լինելու գաղափարը: Ինչպէս աշա-
կերտը, այնպէս էլ աշակերտուհին, պէտք է
դպրոցական նստարանի վրա իւրացնէ այն
տարրական ծանօթութիւնները, որոնք պայ-
մանաւորում են անհատի վերաբերմունքն ու
պարտականութիւնը դէպի հասարակական կուլ-
տուրական մարմինն ու քաղաքական կազմը:

6. Կինը ոչ միայն ընտանեկան դաստիար-
ակչուհի է, այլ և նոյնքան անհրաժեշտութե-
անքով դարձել է նա այսօր հասարակական

կան կիսանքի շաղի վրա: Ժամանակի խթան-
ներն եղան հրէաները, և ապա հայերը: Առա-
ջինները գլխաւորապէս հաստատուելիքն քաղա-
քում և մեծ ծաւալով սկսեցին պարսպել ոսկեր-
չութիւնով, ժամագործութիւնով, դերձակու-
թիւնով և վաշխառութիւնով: Իսկ հայերը հետ-
ները բերած դրամադրութիւնով հեռաւոր տե-
ղերից ապրանքներ բերեցին մեծ քանակու-
թեամբ ու դիպեցին թէ քաղաքում, թէ նա-
հանգի զանազան կենտրոններում և հետզհետեւ
ծաղկեցրին մանուֆակտուր, գալանտորի և
բախկալ առևտրական ձեղերը. նոր-նախիջե-
լանցիք էին այդ անոնները:

Մօտ 20 տարի սրանից առաջ տեղական
վարչութիւնը բոլոր եկուր հրէաներին հե-
ռացրեց նահանգից, ինչպէս քաղաքում տարր-
և ահա, այնուհետև սկսվեց մի նոր հոսանք
հայ և յոյն գաղթականների, որոնց սերով ըն-
դունում էր տեղական վարչութիւնը և ամեն
տեսակ դիւրութիւններ մատակարարում, որ-
պէս զի երկիրը ծաղկեցնէ: Իշխանութիւնը
չը սխալվեց: Հայերը, որոնց թիւը միայն քա-
ղաքում 300 տնից պակաս չէ, այնպիսի տն-
տեսական դարկ տունն Կուրանեան նահան-
գին, որ նա այժմ ամենահարուստ նահանգնե-
րի շարքում պատուաւոր տեղ է ընդունում Ռու-
սաստանի մէջ: Այստեղ կան հայեր՝ Պարսկաս-
տանից, Թիւրքիայից և Անդրկովկասի զանա-
զան կէտերից, օրինակ, Թիֆլիսից, Ախալցխա-
յից, Զալա-Օղլիից, Ալեքսանդրօպոլից, Երե-
ւանից և Կարսից: Կան և Մօզդոկից, Դաւա-
րից, Նոր-Նախիջևանից և այլն և այլն:
Վերջինների աւանդական փէշակն է՝ մանու-
ֆակտուր և գալանտորի առևտուրը մեծ ծա-
ւալով: Թիւրքիայից եկած հայերը ծխախոտ
են ցանում, ջալա-օղլիցիք, արաբի առևտուրը
թողած, այժմ հողեր են կապալով վերցրել,
վար ու ցանքով են պարագլուխ: Դաւաքից գի-
նու առևտուրով, ալեքսանդրօպոլիցի ու կարսե-
ցիք միջի առևտուր ունեն, բաղաններ ու այ-
գիներ են տնկում:

Ամենից աւելի խոշոր երեւոյթը այն է, որ
պարսկաստանցի և ալեքսանդրօպոլիցի մի քանի
հայեր ձեթի հրաշալի գործարաններ են շինել
և մեծ քանակութիւնով ձեթ ու ձիթաբլիթ
(макуха) են արտահանում թէ Ռուսաստան և
թէ արտասահման: Աւետանի և Անպէտեան-

դաստիարակչուհի՝ դպրոցական հաստատու-
թիւններում: Պէտք է ժողովրդական-իգական
դպրոցների ուսուցչուհիների համար ունենալ
նոյն պայմաններով և նոյն ծրագրով ուսուց-
չական սեմինարիաներ, ինչպիսին արական
սեռն ունի, եթէ, ի հարկէ, տեղական կառա-
վարութիւնը դեռ չէ հաշուել մի և նոյն հաս-
տատութիւններում երկու սեռին ուսուցչական
նախապատրաստութիւն տալու մտքի համար:

7. Ուսուցչուհին չը պիտի ճանաչվի որպէս
մի հեռաւոր պաշտօնեայ՝ դպրոցական յարկի
տակ: Նա սօցիալական վերահսկողութիւն ու-
նենալու պարտականութիւն պիտի ստանձնէ
և դուրսը՝ ընտանիքում ու հասարակական
կենսանքում: Ուսուցչուհիները պիտի այցելեն
աշակերտուհիներին տները՝ դիտելու այն մըթ-
նորդը, ուր սնվում է դպրոցի սանիկը, ճա-
նաչելու այն ծնողներին, որոնց խնամատա-
րութեան ենթարկված են իրանց աշակերտու-
հիները:

8. Երկուսն սերնդի միասին սովորելու խն-
դիրը, որ այնքան ջերմ ոգևորութեամբ պաշտ-
պանեց Ֆինլանդիայի կանանց պատգամաւորը,
բացատրելով իրանց երկրում ունեցած այդ
փոքի (80-ական թուականներից) մեծ աշո-
ղութիւնը, գտաւ բոլոր կոնգրեսներին կող-
մից ընդհանուր հաւանութիւն:

9. Այսպէս անուանված մտաւոր պրօլետա-
րիատի՝ ուսուցչական դասի, վարձատրութեան
խնդրի քննութեան ժամանակ երևաց, որ գրե-
թէ ամենուրեք, ուսուցչական համապատաս-
խան պաշտօններում, ազամարդը վարձատր-
վում է աւելի բարձր չափով, քան կինը: Ա-
մենատրուր օրինակը տալիս է Իտալիան, որ-
տեղ գիւղական և գաւառական ուսուցչուհին

Ունանեանի գործարանները իրանց հրաշալի
կազմով եւրօպական տեխնիկ գիտութեան վեր-
ջին խօսքն են հանդիսանում. օրական 3—4
հազար պուդ ձեթ պատրաստող գործարաններ
են դրանք, որոնց նմանը ամբողջ Ռուսաստա-
նում չէր գտնուի: Իրա համեմատ էլ, ի հարկէ,
արևածաղկի սերմ է նրանց հարկաւոր: Եւ ա-
հա ժողովուրդը որտեղ պարսպ հող տեսաւ,
իսկոյն արևածաղիկ, կտաւատի սերմ է ցա-
նում, ցորեն, գարի, հաճար և այլն, որովհետև
սպառողները, նոյն տեղումն էլ՝ ցորենները
բաց արած գալիքի նման անհամբեր սպասում
են բերքերի հասնելուն: Մենակ Լ. Դրէյֆուսը
միլիոնաւոր պուդբով արժութիւն ու ձիթաբլիթ
է ստանում արտասահման. իսկ տեղական դրա-
մատէրները տգիտութեան պատճառով չեն հա-
սել այն հեռատես ու խելացի ձեռնարկութեան,
որպէս զի սինդիկատներ կազմեն և արտահան-
վող ապրանքների գործը իրանց ձեռքը առ-
նելով՝ թոյլ չը տան, որ ռուսական ոսկին
գնայ թափով արտասահմանի հրէաների գեր-
պանները:

Վերջերս մի քանի հայեր սկսել են խոյ ու
տաւար ևս արտահանել, մինչև Պետերբուրգ
տանում են. իսկ խոյ բուծելու եղանակը թէև
լսել են, որ Անգլիայում կատարելագործված
է, բայց դեռ ևս ոչ ոք սերտ չէ անում գնալ
այնտեղ, գործը ուսուցնալիք և ապա տե-
սածը իրագործել ընկալալայրում: Տրապիզո-
նից եկած յոյները ծխախոտ են ցանում. բայց
ուրիշ տեղերից եկածները գլխաւորապէս հա-
լալի են. գիւղացիներին փող են բաժանում,
սարդի նման ցանցում են և նրա աշխատանքի
պտուղը—ցորենն ու արևածաղիկ սերմը՝ էժան-
էժան անում—ամբարում են, որպէս զի յետոյ
հայ գործարանատէրերի վրա թանկութեամբ
ծախեն. բայց ամեն ժամանակ էլ այդ նրանց
չէ աշոյղում. այս տարի, օրինակ, ձեթի գինը
ընկած լինելով, արևածաղիկ սերմն էլ գին
չունէր. յոյները մինչև ուշ զարուն սերմը չէին
ծախում, բայց ստիպված եղան շատ էժան
ծախել ընկելիքի տոկոսներից ազատվելու
համար և, ի հարկէ, զգալի քանակներ ունեցան:
Այս րօպէս ևս անձեռնհաս եմ վիճակագրա-
կան տեղեկութիւն տալ՝ թէ Կուրանեան նա-
հանգի հայերը ինչքան տուրք են վճարում
տարեկան գանձարանին. միայն թէ դա մի

տարեկան հազիւ 500 ֆրանկ է ստանում:

IV

II. սեկցիան՝ Կանանց հասարակական կու-
լտուր: Բաղմաթիւ դասախօսութիւնների ա-
ռարկայ կազմում էին այստեղ հետեւեալ նիւ-
թերը. «Կինը երկրագործութեան եւ սնային
ծառայութեան մէջ», «Գործարանական բանու-
րուհները վիճակը», «Կինը որպէս ճիւղակներ
խնամաստանի» և այլն:

Կանանց ֆիզիքական աշխատանքի սահմա-
նում ամենատարբեր, սարկութեան հաւասար
վիճակ ունեցող գործունէութիւնը կազմում են
երկրագործ բանուրուհները զբաղմունքը և
տնային ծառայութիւնը՝ աղաքնի կոչումը:
Աշխատանքի ժամերի և վարձատրութեան ու-
րոյ, օրէնքները սահմանված նորմա դեռ գոյու-
թիւն չունի այդտեղ: Գիւղը, գաւառը ամայի
է դառնում հետզհետէ: Սովորական գաղթը
վարակի է և իգական սեռի շարքերը, որոնք
գոյութեան ապաստան են գտնում մեծ քա-
ղաքների գործարաններում, համեմատաբար
լաւ պայմաններով, շնորհիվ հէնց այն հան-
գամանքի, որ այնտեղ է գործում ձեռք ձեռք
տուած գիտակից պրօլետարիատը՝ յանուն
դասակարգային շահերի: Իտալիայի պատգամա-
ւոր տիկին Արտօբիլլի յուզված նկարարում
էր Իտալիայի երկրագործ բանուրուհներին
վերին աստիճանի եղելի վիճակը, որոնք 12
ժամ շարունակ աշխատելով բրինձի ճահճային
ցանքներում, շարունակ ենթակայ են մալա-
րիա կոչված հիւանդութեան, որին զոհ են
գնում տարեկան 15000 հոգի:

Եթէ կայ մի եւստպան, անհատականութիւն
խորտակող, այլասեռող ու անբարոյականաց-
նող կոչում, դա տնային սպասարարուհի, ա-

*) Քաղաքացիական կանանց շարժման այս ըմբռնու-
մը կազմում է մի տուր կոնտրաստ պրօլետարական
կանանց շարժման հետեւալ մօտօյնի. «Կին սեռի վախ-
ճանական էմանսիպացիայի առաջին պայմանը կազ-
մում է կնոջ անտեսական անկախութիւնը»:

պատկանելի գումար է կազմում, որի վրա մի ժամանակ նոյն իսկ ֆինանսների մինիստրը ուշադրութիւն է դարձրած ցուցահանդէսում։

Եկատրինոգրադի ուսու հասարակութիւնը, ի հարկէ, արդէն ունի իր սեփական կուլտուրական հաստատութիւնները. նա արդէն մօտ երկու տասնեակ սերունդ է կրթել և պատրաստել է հասարակութեան անդամներ։ Հասարակութիւնը, իր անցյալի չափի, աշխատում են յետ չը մնալ նրանցից. չը կայ, համարեա, ընտանիք, որի գլուխները որ և է ուսումնարանում չը սովորեն. բարձրագոյն ուսում ստացած երիտասարդներ նոյնպէս կան. առաջին կըրթված սերունդը արդէն այրական հասակից դէպի ծերութիւն է քայլում, իսկ երկրորդ սերունդը մեր աչքի առաջ սովորում է, որպէս զի իրանով մօտիկ ապագայում նոր սերունդ կազմէ։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԻՍԻՏԵԱՆ

Բաղլանի, յունիսի 17-ին

Այս տարի Ս. Սոֆյանայի անունով մի պարոն ստանում է «Մշակը». այդ պարոնը ինքը արհեստագործ է և ցանկանում էր կարգաւ «Մշակ» թերթը։ Բայց դեռ քիչ ծանօթ լինելով դրականութեան հետ ցանկանում էր կամայ-կամայ ընտելանալ ընթերցանութեանը։ Ստանալով «Մշակը» նա առաջարկում է ուրիշներին, որպէս զի բացարձակութեանը տան։ Նրա շնորհիւ մի ամբողջ խումբ կարողանում է օգտվել նրա «Մշակից»։ Ուստի արանով մենք յայտնում ենք մեր շնորհակալութիւնը այդ պարոնին։

Բ. Շապեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Սուրբաբի շրջանում հունիսի 21 աղջիկ որբերը ներկայումս գտնվում են Գլխան գիւղում։ Որբերի համար վարձված է մի բնակարան գիւղի մէջ, բաղկացած երեք սենեակից։ Որբերի վրա լաւ է ազդում գիւղական օդը։ Այդ որբերի հետ միասին ամառ են անցկացնում և «Մանուկների խնամող ընկերութեան» չորս հայուհի որբիկներ։

Մեզ հաղորդում են, որ Արաբսի շրջանում գտնվող շատ գիւղերի այգիներում խնձորենիների վրա երեսցել է թրթուռ, որի աւերութեանից երկիւղ են կրում գիւղացիները։

Ստացանք «Կենսաբան առանց հաւատքի» գիրքը, Ա. հատոր ժողովրդական քարոզչների, որ գրել է Ներսէս վարդապետ Դանիէլեան, Սսի վանքի միաբան։ Գիրքը սովորած է Վիեննա 1903 թ. և գրին է 2 ֆրանկ։

Մեզ հաղորդում են, որ ներկայումս մի շարք միջոցներ են մշակվում գորգագործութիւնը զարգացնելու և աւելի շահաւէտ դարձնելու համար։ Ուշադրութիւն է դարձված այն դասին լինելն է։ Բոլոր արմատական սօցիալ-քաղաքագետները անպայման կողմնակից են այդ կոչման իսպառ վերացման։ Կանանց կոնդիցիոնը վճեց բուն պրօպագանդա սկսել պատասխանատվությունը շրջանում, հասկացնել նրանց դասակարգային շահերը և խմբակցաբար կազմակերպել ու միացնել կանանց շարժման։

Կանանց քանակը առևտրական ծառայութեան և հաղորդակցութեան զանազան հիմնարկութիւնների մէջ աճում է խիստ արագ տեմպով։ Այս սահմանում, ինչպէս և բանաւորութիւնների խնդրում, կանանց շարժման ծանրակշիւ մասը կազմում է սեռի-դասակարգային շահերի պաշտպանութիւնը, կին պաշտօնականների անտեսական ապահովութեան խնդիր։ Չը նայելով որ այժմ, օրինակ, ամբողջ Գերմանիայում աւելի քան 130,000 առևտրական ցածր կարգի ծառայողներ կան, այնուամենայնիւ գերմանական կառավարութիւնը, ինչպէս վերև տեսանք, չէ ուզում կնոջ ընտրողական իրաւունքի մասին ոչինչ լսել։ Կնոջ մուտքը երկրակրթութեան, պատմական և հեռագրատան պաշտօնավարութեան մէջ, սկսած 30 տարուց ի վեր, ազատ է եւրօպական շատ երկրներում, թէև մի քանի տեղ տարօրինակ պայմաններով։ Օրինակ, Աւստրիայում չաժնանացած կին պաշտօնական իրաւունք չունի ամուսնանալու, իսկ եթէ ամուսնացած կին ամուսնացած չէ, ինչպէս և որ ներկայումս պատմական և հեռագրատան մէջ կին ծառայողների թիւը հասնում է 30,000-ի, Յոսանիայում՝ 15,000-ի, փոքրիկ Ունգարիայում՝ 4500-ի։ Ունգարիայում պատմական կառավարիչներից կանայք ա-

բանի վրա, որ կազմակերպվի գորգերի կանոնաւոր վաճառահանութիւն դէպի արտասահման։

ԳԵՏԱՇԵՆԻՅ (Գանձակի գաւառ)։ Այս տարի մեր արտերը առատ հունձ և այգիները առատ բերք էին խոտանում. սակայն ամսիս 11-ին, երեկոյան ժամը 5-ին, կարկուտով մի քանի րօպէի մէջ բոլորովին փչացրեց թէ արտերը, թէ խոտանալները և թէ այգիները, զրկելով միանգամայն մեր գիւղացիներին տարվա աշխատանքից։ Կարկուտի արագ և անսովոր ընթացքը, զետեղի հետ հաւասարեցնելով նրանց, եկեղեցապատկան շինութեան տանիքի վրայի կղմիները քամին օդը թռցնելով մի մասը բոլորովին ոչնչացրեց։ Վնասը հասնում է մի քանի տասնեակ հազարներին։ Այդ նոյն օրը և րօպէին նոյն աղէտի ենթարկվեցին և մեր շրջակայ գիւղերի վրա ու ցանքերը։

ՍՏԱՎՐՈՊՈԼԻՅ մեզ գրում են. «Այսօր, ամսիս 12-ին, Ս. Գրիգոր Լուսաւորելի տոնի օրը մեր եկեղեցու տօնն էր։ Հանդիսաւոր պատուրագ կար, որի ժամանակ երգում էր պ. Բաղդասարեանցի եռաձայն խումբը։ Երկու սեռի բազմութիւնը լցրել էր եկեղեցին, կային շատ տարազներ։ Եկատրինոգրադից և Արմաւիրից եկել էին ուսանողները։ Պատարագիչ Սահակ քահանայ Տէր-Յովնանիսեանցը շատ գեղեցիկ և ազդու բարոյ խօսեց մեր երանելի թարգմանիչներ Ս. Մեսրոպի և Ս. Սահակի յիշատակին տաւերի դիմելով 1500 ամակի առիթով։ Քարոզը իր հիմնալի օրինակներով ու մտքերով շատ լաւ տպաւորութիւն թողեց մեր հասարակութեան վրա։ Քարոզում էր սէր դէպի լեզուն, դրականութիւն, եկեղեցին։»

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են հետեւեալը. «Առաջին անգամը չէ, որ շուշեցիք գանգատվում են ջրի մասին։ Ամբողջ մարտ, ապրիլ, մայիս և յունիս ամիսները մենք խումբ ենք ցնկալուել բառիս բուն նշանակութեամբ։ Բայց միայն հեղեղներից գոյացած ցնկալները չենք աճում մեր փոքր։ Շուտով կը սկսվի մի այլ սեզօն, դա վրանաբնակների սեզօնն է, որոնք ամբողջ ամառ իրանց անտեսները ջրերի վրա պահելով մեզ պիտի խնայեն անգամաւոր։ Տասնեակ հազարներ ծախք ցոյց տուող քաղաքային վարչութիւնը մի րօպէ չէ կամենում մտածել, թէ այդ ցնկալները և կեղտալները ինչ հիւանդութիւններ կարող են ստեղծել մարդու համար և քանի՞ կեանքեր խել մեղանից։ Հարկաւոր է միայն ջրի խողովակները աղբւրի աղբի մօտեցնել։ Թանգութիւնից բոլորը զգվել են։ Եւ թանգութիւն գոյողները—չորս հինգ բախկալներ են, որոնք լայնի չէն անում ամեն մարդու ապրանք ծախել։ Չէք տեսնի, որ մի գիւղացի իր պանիւրը, իւղը, բոխին, կապարը, ձուռը, հաւը, միրգը

ւելի շատ են (2180 հոգի), քան տղամարդիկ (1080)։ Սակայն ինչ ասել կուզի, որ այստեղ ևս տիրում է վարձատրութեան նոյն անհամաչափ, անարդար կշիւը։ Ոյժերի անարդար շահագործութիւն չէ ինչ է, երբ մի և նոյն ֆունկցիաները, մի և նոյն պատասխանատվութեամբ դեղավարող պաշտօնականներից տղամարդը աւելի շատ է վարձատրվում, քան կինը։ Յիսանիայում կին պաշտօնական ստանում է տարեկան 1000—3000 ֆրանկ, իսկ տղամարդը՝ 1500—4500 ֆրանկ։

Քաղաքային վրա աշխատող կին սեռի ամենաճնշված ու դժբաղդ մասը ներկայացնում են բանւորութիւնները։ Տեխնիկական ինդուստրիայի կատարելագործված արդիւնաբերութիւնը դրոյմել է 19-դ դարի յատուկ կնիքը և գեղեցիկ սեռի ճակատին։ Սակայն հէնց այդ նորեկները երկրորդ, այդ նուերական կոչումը կին սեռի, կոչված է սեռի փրկութեան և արմատական էմանսիպացիայի հիմնաբարը լինելու։ Ուղիղ այդ շրջանից սկսւած դուրս է գալիս կանանց շարժումը վերացական ֆրագմաների և անարտուղ իրէօգտիյի սահմանից և ամուր կառուցվում բնական անհատական կանանց շարժման պարագլուխները։ Նրանք գիտեն, որ կին սեռին ընդհանուր բաղադրվածութեան մէջ պիտանի տարր դարձնողը եղել են ամենից առաջ նորագոյն դարի անտեսական յեղաշրջանները, և բնական է, երբ նրանք ջանք չեն խնայում պաշտպանելու իսկական կուլտուր-տրեգիկների շահերը։

Առաջ բերած գեղեցումներից պարզ երե-

և այն հրապարակի վրա ինքը ծախէ, այդ ամենը բախկալների անվիճելի արտօնութիւնն է։ Ուր պիտի տանէ գիւղացին իր բեքը, եթէ այդ մենավաճառները օրերով չը գնան. դարձեալ քաղաք չը պիտի բերէ։ Հարկաւոր է միայն արգելի, որ բախկալը նստի իր տեղը և գիւղացին ինքը իր բեքը բերէ քաղաք և դնէ հրապարակի վրա։ Մարբութեան մասին խօսելն աւելորդ է։ Մայրավայ հեղեղները արդէն Շուշու փողոցների երեսը պարզ են անում։ Երեք տարի շարունակ մենք տեսնում ենք Աղաբէզեցի ձորում «շահ լաղովմի» մի անգինի ձեղքուածք, որից փչող դարձահոտութիւնը մի կողմ թողած՝ Շուշու մուկ ու խուլ փողոցների անծնաթ անցողը հեղաւորութեամբ կարող է ընկնել ապականութեան այդ խոր խորատը և անդարձ խեղդամահ լինել։»

ԿՕՁՐԻՅ մեզ գրում են. «Այս ամառնային սեզօնին ըստ սովորականին չէ երգելու նախկին խմբապետ Բ. Բերինեանի բառաձայն երգեցիկ խումբը, չը նայած որ երեք տարի շարունակ երգել է նոյն տեղի հայոց սուրբ Կարապետ եկեղեցում»։

ԳԵՏԱՇԵՆԻՅ գաւառի ԲԱՐԳՈՒՇԵՏ գիւղից մեզ գրում են. «Շուշեի անընդհատ տեղացող անձնների, բամբակը Գեոկչայի գաւառում փոքր բացարձակութեամբ շատ լաւ է։ Գարու հունձը վերջանալու վրա է դաշտային մասերում։ Շորճին էլ լաւ է. գիւղացիների ասելով այս տարի խաղողի շատ մեծ բերք է սպասվում, եթէ ի հարկէ մի որ և է աղէտ չը լինի։ Բօժոժը արդէն դուրս է եկել. լաւ տեսակը ծախվում է 11—13 րուբլի, այն ինչ անցեալ տարի ծախվում էր 16—17 րուբլի. գաւառումս այս տարի բոժոժը անաղղ բերք տուեց, շնորհիւ ցորենին։ Այս տարի ամբողջ գաւառում, թէ հայաբնակ և թէ թրքաբնակ գիւղերում, շատ սպանութիւններ են լինում։ Ուսելու մթերքները բաւական թանգ են. իւղը 25—35 կօպէկ, ձու 10 հատ 12 կօպէկ, ճուղը 15—20 կօպէկ»։

Պարսկաստանի ԴՈՁԱՆ քաղաքից հաղորդում են. «Մորեիւր անցեալ տարի Ասխաբադից թռչելով բուն դեղք Պարսկաստանում։ Մեղանում մորեիւր ձիւնի պէս է թափվում ամբողջ օրը ու խումբ խումբ նստում ամեն մի տարածութեան վրա։ Գիւղերում ցորեն չը կայ, թէ ասան մարդիկ և թէ կանայք ամբողջ օրը արտերում ծուռն չըքած աղօթում են»։

ՆՈՐ-ԲԱՅԱՆԻՅ մեզ գրում են. «Յունիսի 12-ին քաղաքս ժամանեց երկանի թիմակալ առաջնորդ Կարապետ վարդապետը։ Հետեւալ օրը, կիրակի, պատարագին առաջնորդը մի ազդու քարոյ խօսեց, որով ի մի միջի այլոց հրաւիրեց չը զրանալ նուերատուութիւններ յօ-

ւում է, թէ որ աստիճան եղելի վիճակ ունեն բանւորութիւնները առհասարակ բոլոր երկրներում։ Ֆիզիքական առատ ոյժերի անապին քանակ մեղքութեան վաճառանոցի վրա չնչին ապրուստի համար անբաւարար օրավարձով։ Հօլանդիայում, օրինակ, բանւորութեան միջին օրավարձը կազմում է հազիւ 1 մարկ 70 ֆենիգ (80 կօպ.)։ Հատով աշխատող (Akkordarbeit) բանւորութիւն (ծխախոտի գործարանում), բանկով օրակին 15 ֆամ, ստանում է շաբաթը 5 մարկ (2½ ր.), մինչդեռ Ամստերդամում ամենաողբալի ապրուստը արժէ շաբաթը մինչև 6—7 մարկ (3—3½ ր.)։ Ամենամանաւելի վիճակ ունի բանւորութիւն մանաւանդ տնայնագործութեան (Hausindustrie) մէջ։ Աշխատանքի այդ ձևով կազմում է տեխնիքական ինդուստրիայի (ֆարբիկայի) նախընթաց շրջանը, որի բնաւ վերացման կողմնակից են այժմ շատ ու շատ անտեսադէտներ ու սօցիալ-քաղաքագետներ։ Տնայնագործութիւնը անային նահապետութիւն է, անգութ շահագործութեան վերին աստիճանին նպաստաւոր աշխատանքի ձևով փոքր կապալաւորատուները համար։ Աշխատանքի ժամերի և վարձատրութեան օրինական նորմա միանգամայն բացակայում է այդտեղ։ Գերմանիայում, օրինակ, տնայնագործ բանւորութիւն ստանում է մի դիւթին կանանց շապիկների կարելու համար 1 մարկ 20 ֆենիգ (60 կօպէկ)։ Հինգ անդամից բաղկացած ընտանիքը վաստակում է շաբաթը 14 մարկ (7 րուբլի), որից 4 մարկը նիւթի վրա է ծախվում։ Այսպէս և բազմաթիւ այլ օրինակներ, որոնց մի առ մի թուելը մեզ շատ հեռու կը տանէ։ Կօնդէսը վճռում է միաձայն պահանջել բոլոր երկրների օրէնագիր մարմիններից օրինական մի և նոյն պաշտպանու-

ղուտ նորակառոյց, բայց կիսաշէն եկեղեցու։ Եկեղեցու գործերը կարգադրելուց յետոյ հայր առաջնորդը երէկ մեկնեց դէպի Երանոս գիւղը։ Ի միջի այլոց հայր առաջնորդը յորդոր կարգաց տեղացի ձեռնհաս անձնաւորութիւններին՝ առանձին ուշը դարձնել հնութեան մնացորդների վրա, աշխատել և որոնել գտնել այս կամ այն տան մէջ պահվող պատմական կամ կրօնական յիշատակաւորները, ձեռագիրները և այլն, մի առանձին նշանակութիւն տալով այն հանգամանքին, որ անտարբեր վերաբերվուեց շատ կարևոր արժէք ունեցող հնութիւններ մատնվում են կորստեան։

ԽԱՐԿՈՒՅ մեզ գրում են. «Յունիսի 9-ին առաջին անգամ Սարկիօլում, յայտնի դերասանուհի Եւօրսկայան, Պետերբուրգի Փոքր թատրոնի դերասանական խմբի մասնակցութեամբ, խաղաց իշխան Բարեատինսկու «Կեանքի պարը» պիեսան։ Ինչ տարօրինակ և մի և նոյն ժամանակ էֆֆէկտաւոր խորագիր. սակայն ակնյայտին է այն հանգամանքը, որ այդ վերնադրի տակ հեղինակը կարողացել է մի ամփոփ երգիծաբանութիւն կծու սարկազմով խնդոված ստեղծել մայրաքաղաքի այլասեւած արիստօկրատիայի կեանքից։ Պիեսի բովանդակութիւնը աւելորդ ենք համարում առաջ բերել, քանի որ «Մշակում» այդ մասին խօսվել է արդէն։ Եւ «Կեանքի պարը» բնականից վերցրած պատկերներ պարունակելով մեծ հետաքրքրութիւն էր շարժել ձևաւոր միայն Պետերբուրգում, ուստի դարմանալու ոչինչ չը կայ, որ այնտեղ աւելի քան հարկւր անգամ խաղացվել է այդ պիեսան։ Այստեղ ասկայն այդ տպաւորութիւնը չը թողեց, մասամբ տաղտալի անցաւ, չը նայելով, որ դերասանների խաղը հմուտ էր և մոտձված։ Գեղեցիկ էր մանաւանդ տ. Եւօրսկայան իշխանուհու դերում, որի համար արժանացաւ բուն ձեռնհարութեան և ստացաւ ծաղկեայ փնջեր։ Պիեսի մէջ, ինչպէս յայտնի է, իշխանուհին պարում է լեզգիական և ուղեւորարա պարերը. տ. Եւօրսկայան, ինչ ասել կուզի, շատ գեղեցիկ պարեց, սակայն դաշնակահարը այնքան աղաւաղված կերպով էր նուազում կողկասեան այդ գեղեցիկ եղանակները, որ մեր ջրերը ակամայից շարժվում էին, մինչդեռ Սարկիօլի ժողովուրդը անտարբեր լսում էր, անծանօթ լինելով եղանակին։ Թատրոնը լիքն էր։ Պիեսը տրված էր իշխան Բարեատինսկու —հեղինակի բեմասօրութեամբ»։

ԴՁԱՐԻՅ մեզ գրում են. «Գերասան Յ. Ստեփանեան սիրողների մասնակցութեամբ տուեց ընդամենը հինգ ներկայացում, որոնցից առաջին երկուսի մասին գրված էր «Մշակում»։ Երկրորդ ներկայացումն էր «Բիւն», որ խաղաց բաւականին աշուղ։ Զորքորդն էր «Ժան-Բօդրի» դրաման, լաւ էր և այստեղ։ Ստեփանեան այդ ներկայացման ժամանակ թեան տակ առնել բանւորութիւններին, հաւասար ծառայութեան համար հաւասարապէս վարձատրութիւն ինչպէս բանւորները և տընայնագործութեան սահմանում նշանակել աշխատանքի տեղութեան և վարձատրութեան խտրել վերանակողութիւն։ Աւստրիայի և Անգլիայի պառագամաւորները առաջարկում են կօնդէսին փորձել բանւորութիւնների մէջ ևս «ընկերակցական հաւաքական ձեռնարկութիւններ» հիմնելու, ինչպէս շատ երկրների բանւորներն ունեն։

Կարմիր խաչի ընկերութեան հիմնադրութեամբ հրապարակ եկաւ կնոջ համար և մի այլ կոչում հիւանդի խնամատարութիւնը, որ օրէջօր լայն ծաւալ է ստանում ամենուրեք։ Մինչև այդ, կին խնամատարներ, սահմանափակ քանակով գտնվում էին եկեղեցական կազմակերպութեան հսկողութեան ներքոյ։ Այդ հին ուղղութիւնը, որ մինչև օրս իտալիայում դեռ տիրող բանւորութիւն ունի, կամազուրկ ճնշման և անհատական անազատութեան մէջ է պահում խնամատար կանանց, ուստի և կօնդէսը միաձայն որոշում է աշխատել վերացնելու կղերի աղբիւրները խնամատարութեան գործում և գալի տալ նոր ուղղութեան՝ պետական հովանաւորութեան ներքոյ։ Խնամատար կանանց մէջ ևս դարգացել է խմբակցութեան և ընդհանուր կազմակերպութեան դարգաւորը, որ 1903 թ.ին միջազգային բնաւորութիւն ստացաւ։

Բ. Իշխանեան

Բ և Է լին.

ԱԹԻՆՔ: Թագուհին և իշխան Նիկօլայ իբր
ամուսնով ճանապարհ ընկան Ռուսաստան:

